# Ալեքսանդր Շիրվանզադե

## Ցենզը և մարդը

Քաղաքային խորհրդի առաջիկա ընտրությունները ամենքի միտքը կլանել են: Մարդիկ ոչնչով չեն ուզում զբաղվել, բացի այդ ընտրություններից: «Ժողով» ասված ախտը շարունակում է զոհեր տանել: Վա՛յ ինձ, վա՛յ ինձ, ես էլ վերջապես վարակվեցի: Բայց ինչպե՞ս: Ես ուզում եմ քաղաքային ձայնավոր դառնալ: Այո՛, բավական է, որքան ձայնս փորումս պահեցի, պե՛տք է վերջապես աշխարհ դուրս գամ:

Պրոպագանդան վաղուց սկսել եմ: Անցյալ կիրակի երեկոյան քաղաքիս «Կալիվշայա Բալկա» ասված թաղում ընտրողների ժողով կար: Ես էլ կանչված էի:

Կկամենա՞ք ձայնավոր լինել, հարցրեց ինձ մի արխիվարիուս, հենց որ ներս մտա:

Այո՛, շատ ցանկանում եմ: Բայց ցենզ չունեմ:

Այդ ոչինչ, կգտնենք, պատասխանեց արիխվարիուսը, իմ կնոջ մոր քույրը, պառավ Անաստասիան, ունե, քեզ կկարգենք խնամակալ:

Ես ուրախացա, անունս մտցրին «Կալիվշայա Բալկայի» ցուցակը: Վազեցի մամուլի ներկայացուցիչների ժողովը, որ այնտեղ էլ աշխատեմ անունս ներս խրել: Հավաքվել էին մոտ 20 խմբագիրներ և աշխատակիցներ, որոնցից երկուսը միայն ցենզ ունեին: Ես հայտնեցի, որ ուզում եմ կանդիդատ գրվել: Ինձ ուղարկեցին մյուս սենյակ, որ իմ մասին կարծիքներ հավաքեն, արդյոք արժանի՞

եմ ընտրվելու: Հենց որ դուրս էի եկել, իսկույն ներս կանչեցին և ասացին, որ «կարծիքը» կազմվեց, գողություն չեմ արել, արժանավոր մարդ եմ:

Բայց ցենզ չունեմ, այստեղ էլ կրկնեցի ես խորամանկաբար:

Ես կգտնեմ, ասաց հրապարակախոս Սումբուրովը:

Իսկ դուք ունե՞ք:

Ոչ, Սերաֆիմ Պետրովիչը խոստացել է գտնել:

Իսկ Սերաֆիմ Պետրովիչը ունի՞:

Ո՛չ, Արտեմ Գասպարիչը աշխատում է նրա համար գտնել, իսկ Արտեմ Գասպարիչի համար աշխատում է գտնել Յակիմ Յակիմիչը, իսկ Յակիմ Յակիմիչի համար աշխատում է Մարկիան Լուկիանիչը, իսկ Մարկիան Լուկիանիչի համար աշխատում է Սարգիս Ավագիչը, իսկ Սարգիս...

Լավ, լավ, ընդհատեցի ես, ինչպես տեսնում եմ ամենքդ էլ «լյութ-լոթիներ» եք:

Ի՞նչ ասել է «լյութ-լոթի»:

Голыши, թարգմանեցի ես:

«Լյութ-լոթիների» ժողովից գնացի իսկույն հաստափորների ժողովը: Այստեղ արդեն ամենքը ցենզավորներ էին և ի՛նչ ցենզավորներ, բանկիրներ, դրամատերեր: Սկզբում ինձ ընդունեցին արհամարհանքով: Բայց ես մի սուտ փչեցի, ամենքը վախեցան: Ես ասացի, որ երեք հարյուր իննսուն հինգ ընտրողներ ունեմ, որ ում ուզեմ՝ նրան պետք է ձայն տան:

Այն ժամանակ մի քանիսը Նուսնուսովին բոթեցին, որ ինձ առանց այլևայլի «ցուցակի» մեջ մտցնեն:

Ձեր ապագա գործունեության պրոգրա՞մը, դարձավ ինձ Նուսնուսովը:

Առաջինը քաղաքագլուխ կընտրեմ ձեզ, իսկ վարչության անդամներ ձեր քենակալին և ձեր աներոջ որդուն: Ի՛նչ առաջարկություն անեք կընդունեմ, երբ որ ասեք՝ այո՛, կասեմ այո՛, երբ որ ասեք ո՛չ կասեմ ո՛չ: Տեղը եկած ժամանակ դարաբաղցիների հերը կանիծեմ, տեղը եկած Ժամանակ կփառաբանեմ: Եթե «հանգամանքները» պահանջեն՝ վաճառականների դեմ կկռվեմ, եթե ոչ նրանց խունկ կծխեմ: Երբ որ կասեք բուն թիֆլիսեցի պատվավոր գերդաստաններից մեկին կին կծել համեցեք՝ գրիչս ձերը, իսկ երբ հրամայեք գովել ձեր խոնարհ ծառան եմ:

Բավական է, դուք արժանավոր քաղաքացի և նշանավոր գործիչի ծրագիր ունեք, ասացին ինձ չորս կողմից: Դուք կընտրվեք:

Այսպիսով, անունս մտցրին երկրորդ ցուցակի մեջ: Մյուս օրը երիտասարդների ժողովս էր: Այստեղ այնքան էլ հեշտ չէր քիթս ներս խրել, բայց գնացի:

Далой плутократию, գոչեցի ես հենց որ ներս մտա:

Ура! աղաղակեցին միաձայն և ամեն կողմից ժողովականները թափվեցին վրես ինձ գրկելու:

Մտցրեք, մտցրեք սրան էլ ցուցակի մեջ, գոչեց մեկը, որ իսկի ինքն էլ չգիտեր՝ ես ինչ պտուղ եմ: Պրինցիպյանը «կատեգորիչեսկիյ» առաջարկեց «вопрось-ը бокомь» դնել՝ կամենու՞մ եմ ընտրվել: Ես պատասխանեցի, թե այո, կամենում եմ: Բայց անողոքներից մեկը, հոնքերը խոժոռացնելով դարձավ ինձ .

Պարզիր ծրագիրդ:

Էլեկտրական լուսավորություն Խարփուխում, քարափում, Սաղում, Հավլաբարում և Կոլոլ թաղում: Շոգեշարժ գնացքներով երկաթուղի Օրթաճալից մինչև Վերա: Քսանուչորս պահապան Թիֆլիսի քսանուչորս հայ եկեղեցիների գանձարանների վրա . . .

Այդ քաղաքային գործ չէ, քաղաքային չէ . . .

Ներեցեք, շարունակեմ . . . նոր ջանք Հավչալից, անտառներ Մթածմինդայի և Մախաթի սարերում . . .

Բրա՛վո:

Այգիներ քաղաքի բոլոր անկյուններում, բարակներ ժամանակավոր բարոյական և մտավոր հիվանդների համար: Այնտեղ կուղարկենք բոլոր խավարամիտներին:

Մի զույգ լապտեր «Արձագանքի» և «Նոր-դարի» խմբագրատների առաջ:

Այդ ինչու՞ . . . Որ ներս մտնողներն ու դուրս եկողները լավ տեսնեն իրարու . . .

Աֆերիմ, աֆերիմ, ընդհատեցին խոսքս, գոհ ենք, գոհ ենք մտցնել Մաղքոսին մերայինների ցուցակի մեջ: Բայց, նախքան անունս մտցնելը, Ժողովականներից մեկը, որ շատ խոհեմ մարդ էր» խոսք խնդրեց:

Պարոններ, ասաց նա քաղցր ժպտալով, շատ լավ եք անում պ. Մաղքոսին ինտելիգենցիայի ցանկն եք մտցնում, բայց, այսուամենայնիվ, պետք է այն էլ ասած... Ուզում էի հարցը լուծված համարել, но тем не менее, օրինակի համար, նրա անունը մի քանի ցուցակների մեջ կա, այսինքն իմն էլ կա, որովհետև ես . . . Բայց իսկապես ասած, համենայն դեպս շատ արժանավոր է, но во всяком случае . .. Համաձայն եմ . . .

Ես ճառախոսին ծափահարեցի անկեղծ սրտով, և անունս մտավ ցանկի մեջ: Սակայն այստեղ էլ ցենզի մասին հարց բարձրացավ: Քսանուվեց ընտրելիներից մոտ սանուհինզը ցենզ չունեին, ես էլ քսանուվեցերորդը եղա: Բայց հույս կա, որ ամենքս անտեր որբեր գտնենք: